# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2
## ՀՀ ՇՄ ԱՀ-ԳՀԾՁԲ-20/1 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

գ. Աշոցք — 8 նոյեմբերի 2019թ. ժամը 12:00

*Մասնակցում էին՝*

| | |
|---|---|
| Գնահատող հանձնաժողովի նախագահ | Կարեն Աբրեյան |
| Անդամներ | Գևորգ Հովհաննիսյան |
| | Նաիրա Հարությունյան |
| Գնահատող հանձնաժողովի քարտուղար | Բաբկեն Աբրեյան |

**ՀՀ ՇՄ ԱՀ-ԳՀԾՁԲ-20/1 ծածկագրով ընթացակարգի հայտերի բացման և արդյունքների ամփոփման մասին**

Հանձնաժողովի նախագահը նիստը հայտարարեց բացված և հայտարարեց, որ ՀՀ ՇՄ ԱՀ-ԳՀԾՁԲ-20/1 ծածկագրով ընթացակարգի շրջանակում գնվելիք ներքին աուդիտի ծառայությունների համար նախահաշվային գին սահմանված չէ, քանի որ ընթացակարգը կազմակերպվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի 1-ին կետի հիման վրա:

Հանձնաժողովի քարտուղարը տեղեկատվություն հաղորդեց հանձնաժողովի անդամներին գրանցամատյանում կատարված գրառումների մասին: Ըստ այդմ հայտնի դարձավ, որ ընթացակարգին մասնակցության հայտ է ներկայացրել հետևյալ մասնակիցը.

| Մասնակցի անվանումը | Հասցե | Հեռախոս |
|---|---|---|
| «ԳԱՐԱՆՏ ԱՈՒԴԻՏ» ՍՊԸ | ՀՀ ք. Երևան, Ֆուչիկի 27/2 | 012 41-14-22<br>055 10-20-80 |

Քարտուղարը գրանցամատյանը և գրանցված հայտը հանձնեց հանձնաժողովի նախագահին:

Հանձնաժողովը գնահատեց.

1. հայտ պարունակող ծրարը կազմելու և ներկայացնելու համապատասխանությունը հրավերով սահմանված պահանջներին,

2. բացված ծրարում պահանջվող փաստաթղթերի առկայությունը և դրանց կազմման համապատասխանությունը հրավերով սահմանված վավերապայմաններին:

Գնահատման արդյունքները.

| Մասնակցի անվանումը | Ծրարը կազմելու և ներկայացնելու համապատասխանությունը հրավերով սահմանված պահանջներին (համապատասխանում է/չի համապատասխանում) | Ծրարում պահանջվող փաստաթղթերի առկայությունը և դրանց կազմման համապատասխանությունը հրավերով սահմանված վավերապայմաններին (համապատասխանում է/չի համապատասխանում) |
|---|---|---|

| | | |
|---|---|---|
| «ԳԱՐԱՆՏ ԱՈՒԴԻՏ» ՍՊԸ | Համապատասխանում է | Համապատասխանում է |

Հաշվի առնելով գնահատման արդյունքները՝ հանձնաժողովը որոշեց.

Որոշում N 1

*«ԳԱՐԱՆՏ ԱՈՒԴԻՏ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը գնահատել բավարար ՀՀ ՇՄ ԱՀ-ԳՀԾՁԲ-20/1 ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի պահանջների նկատմամբ:*

Որոշումն ընդունվեց ձայների 3 կողմ, 0 դեմ հարաբերակցությամբ:

Հանձնաժողովի նախագահը հայտարարեց հայտ ներկայացրած մասնակցի գնային առաջարկը՝ հիմք ընդունելով տառերով գրվածը: Մասնակցի կողմից ներկայացված գնային առաջարկը հետևյալն էր.

ՀՀ դրամ

| Չափաբաժնի համարը | Արժեքը (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) | ԱԱՀ | Ընդհանուր գինը |
|---|---|---|---|
| 1 | 3200000 | 0 | 3200000 |

Առաջարկված գնի նվազեցման նպատակով հանձնաժողովը բանակցություններ սկսեց հայտ ներկայացրած մասնակցի ներկայացուցիչ Միշա Սահակյանի հետ, ով ներկա էր հանձնաժողովի նիստին: Սակայն մասնակիցն իր գնային առաջարկը թողեց անփոփոխ:

Գնահատող հանձնաժողովը որոշեց.

Որոշում N 2

*Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետը և ՀՀ Կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշման 1-ին հավելվածով հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետը՝ ՀՀ ՇՄ ԱՀ-ԳՀԾՁԲ-20/1 ծածկագրով գնման ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել «ԳԱՐԱՆՏ ԱՈՒԴԻՏ» ՍՊԸ-ին՝ որպես գնման ընթացակարգի հրավերով նախատեսված պայմաններին բավարարող հայտ ներկայացրած մասնակից:*

Որոշումն ընդունվեց ձայների 3 կողմ, 0 դեմ հարաբերակցությամբ:

Հանձնաժողովի նախագահը հանձնարարեց քարտուղարին հայտերի բացման նիստի ավարտից հետո ոչ ուշ, քան հաջորդող աշխատանքային օրը.

1. ՀՀ պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնել «ԳԱՐԱՆՏ ԱՈՒԴԻՏ» ՍՊԸ-ի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ:

2. Ծանուցել «ԳԱՐԱՆՏ ԱՈՒԴԻՏ» ՍՊԸ-ին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը:

Գնահատող հանձնաժողովը որոշեց.

Որոշում N 3

*ՀՀ ՇՄ ԱՀ-ԳՀԾՁԲ-20/1 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատման արդյունքների հաստատման նպատակով հանձնաժողովի նիստը հրավիրել 2019թ.նոյեմբերի 15-ին, ժամը 10:00-ին Աշոցքի Հրապարակ 1 հասցեում գտնվող Աշոցքի համայնքապետարանի վարչական շենքում:*

Որոշումն ընդունվեց ձայների 3 կողմ, 0 դեմ հարաբերակցությամբ:

Նիստին ներկա հանձնաժողովի անդամների ստորագրությունները

| | | |
|---|---|---|
| Հանձնաժողովի նախագահ | ____________ | Կարեն Աբրեյան |
| Հանձնաժողովի անդամներ | ____________ | Գևորգ Հովհաննիսյան |
| | ____________ | Նաիրա Հարությունյան |
| Հանձնաժողովի քարտուղար | ____________ | Բաբկեն Աբրեյան |